ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ընդունել ի գիտություն, որ 2019թ դեկտեմբերի 19-ին (հրապարակված 20.12.2019թ.) ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-20-9/8 ծածկագրով ընթացակարգը «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիման կասեցվել էր: ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից 26.12.2019թ.-ին (հրապարակված 30.12.2019թ.) կայացված որոշման (ԳԲՔԱ-ՆԳ-2019/92 ծածկագրով) համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել նիստի աշխատանքները

ք. Երևան 14-ը հունվարի 2020թ.
Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Խաչպար», «Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ներին** կողմից ներկայացված շտկումների քննարկման, դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

«Խաչպար», «Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ներին կողմից ներկայացված շտկումների քննարկման, դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **«Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ների** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել էին 18.12.2019թ. ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշեց **«Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել բավարար:

1.2 Հաշվի առանելով այն հանգամանքը, որ հայտերի գնահատման արդյունքում **«Խաչպար» ՍՊԸ-ն** հանձնաժողովի կողմից 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որին 11.12.2019թ. armeps համակարգի միջոցով ծանուցվել էր ներկայացնելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որը սակայն օրենքով սահմանված ժամկետում **«Խաչպար» ՍՊԸ-ն** չներկայացվեց և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ **18.12.2019թ.** ծանուցմաբ պահանջվեց ներկայացնել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները.

-«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1) **2-րդ չափաբաժնով** նախատեսված «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր» ապրանքատեսակի մասով ընթացակարգի

հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել էր, որ նշված ապրանքատեսակը պետք է ունենա ***«Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%»,*** որի վերաբերյալ դրույթը բացակայում էր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

9-րդ չափաբաժին՝ «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ գրանուլաներ» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել էր փաթեթավորումը՝ ***գործարանային տուփ և պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%,*** որի վերաբերյալ դրույթը բացակայում էր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

Քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը օրենսդրությամբ նահմանված շտկելու հնարավորությունից արդեն իսկ օգտվել էր (սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթեր չէր ներկայացրել և նրան որպես շտկում հնարավորություն էր տրվել ներկայացնելու այդ փաստաթղթերը), իսկ օրենսդրությամբ կրկնակի շտկում կատարելու հնարավորություն նախատեսված չէ, ուստի հիմքը ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

1.3 Հանձնաժողովը որոշեց վերջինիս տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.4 «Խաչպար» ՍՊԸ-ի մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ **«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին**, իսկ 9-րդ չափաբաժնի մասով՝ **«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին:**

1.5 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և **«ԼԵՅԿՈ» և «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ներին** առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

1.6 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, քանի որ **«ԼԵՅԿՈ» և «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ների** մասով սույն ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ հարցում կատարվել էր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **«ԼԵՅԿՈ» և «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ների** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան